ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ
(1908–1981)

Ծնվել է Ֆրեզնոյում (ԱՄՆ, Կալիֆոռնիա)՝ Բիթլիսից գաղթած հայ ընտանիքում: Գրողի ձևավորման գործում մեծ դեր են խաղացել ինքնակրթությունը, համաշխարհային գրականության ընթերցումը, հարազատ ժողովրդի հոգևոր մշակույթի, պատմության տարրերի ժառանգումը:

1911 թ. երեսունյոթամյա Արմենակ Սարոյանը մահանում է, և Վիլյամ Սարոյանը եղբոր ու քույրերի հետ տեղափոխվում է մանկատուն: Երբ մայրը պետք է երեքամյա Վիլյամին թողներ մանկատանը, նա Coon Jiger անունով մի տիկնիկ է նվիրում, որը Սարոյանի հիշողության մեջ միշտ պահպանվում է: Սարոյանը հետագայում նշել է, որ այդ տիկնիկով կարծես մայրը ցանկանում էր փարատել իր բացակայությունը: Այդ տիկնիկի կերպարն արտացոլվել է նրա ստեղծագործություններում:

Գրողն առաջին անգամ իր ստեղծագործությունը տպագրել է Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթում: Գրական կյանքի առաջին տասնամյակում Սարոյանը գրել է մի քանի հարյուր պատմվածք, որոնցում մտցրել է պատումի նոր ձև, պատկերների ու կերպարների գունագեղություն:

1942 թ. Սարոյանը զորակոչվել է բանակ, աշխատել զինվորական սյուժեների ստեղծման վրա: Նա պատերազմն ընկալել է որպես աղետ: Այդ թեման արտացոլել է «Մարդկային կատակերգություն» վիպակում, «Վեսլի Ջեքսոնի արկածները» վեպում:

1960-ական թթ. սկսած՝ գրել է հուշագրական գործեր:

Մահացել է Ֆրեզնոյում: Դիակիզումից հետո աճյունի մի մասը թաղվել է Ֆրեզնոյի Արարատյան գերեզմանատանը, մյուս մասը՝ Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում:

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

Ջուրը հայի համար սրբազան բան է, ինչպես կրակը: Իր բանջարանոցը, ծառերը կամ որթատունկերը ջրող այգեպանը մասնակից է դառնում մի ծիսակատարության, որը նրա համար խորունկ իմաստ ունի և տալիս է մեծ գոհունակություն: Ֆրեզնոյի այգեպաններն իրենց զբոսախնջույքի համար գնում էին ոռոգման ջրանցքների գլուխը կամ Սան Խոակին ու Քինգս գետերի ափերը: Պետք է ջուրը տեսնեին այնտեղ, ուր հոսանքն ամենից ավելի առատ է: Պետք է ջրի մոտ լինեին:

Ամբողջ շաբաթվա ընթացքում ամեն մի ընտանիք գետ գնալու ծրագրեր էր կազմում, և կիրակի՝ վաղ առավոտյան կամ եկեղեցուց անմիջապես հետո, ընտանիքը նստում էր ձիակառք կամ ավտոմեքենա և քշում դեպի գետ՝ ամբողջ օրն այնտեղ անցկացնելու, ջրի ընդոստ ոստյունները դիտելու, օդը հոտոտելու, թռչունների ծլվլոցը լսելու, բնության գեղեցկություններն ըմբոշխնելու համար:

Գետ գնալը նրա համար Հայաստան վերադառնալու կամ էլ երիտասարդության օրերը հիշելու և անդորրի երկակի վիճակ է: Երեխաները պարում էին՝ արագահոս ջուրը տեսնելով: Նետվում էին ջրի հյուրընկալ ալիքների մեջ և լողում: Ծերերը նստում և իրենց գոյությունն էին վայելում հենց մի այնպիսի տեղում, որ հիշեցնում էր իրենց սեփական երկիրը:

Ձմերուկ ուտելը նույնպես խոր իմաստ ունի հայերի համար: Ձմերուկի հետ սպիտակ հաց և սպիտակ պանիր. սիրած ճաշ է ամռանը: Յուրաքանչյուր հայկական սեղանի վրա մի սափոր ջուր կա միշտ: Հայ մարդը միշտ իր գնահատականն է տալիս որևէ տեղի ջրի որակին:

Ֆրեզնոյում հայերի հաստատվելու պատճառներից մեկն այն էր, որ նրանց նախընտրած տեղի ջուրը ամենից ավելի նման էր Հայաստանի ջրին: Ֆրեզնոյի շրջանում և փաստորեն ամբողջ Սան Խոակին հովտի մեծ մասում հողը բավական նման էր Հայաստանի հողին կամ էլ գեթ հիշեցնում էր Հայաստանի շատ շրջանների հողը: Այս հողում ծաղկում էին ծառերն ու որթատունկը, հատկապես ծիրանի ծառը: Հայկական ազնվագույն երգերից մեկը կոչ-

վում է «Ծիրանի ծառ»: Հայերը շուտով թթենի տնկեցին ու ջրեցին, որովհետև թթենին մի ծառ է, որին ճանաչում ու սիրում էին Հայաստանում: Տնկեցին նաև նռնենի, ձիթենի, նշենի և ընկուզենի, շատերը փորձեցին նաև պիստակենի աճեցնել, բայց պիստակենին չաճեց Կալիֆոռնիայում: Ցանեցին ձմերուկ, սեխ, չաման: Ցանեցին սմբուկ, լոբի, վարունգ, դդում, լոլիկ, պղպեղ, ազատքեղ, անանուխ և տեսակ-տեսակ կանաչիներ: Տնկեցին բոլոր տեսակի որթատունկերը: Եվ ածու-ածու ջուր տարան այս բոլորին՝ բահով չափավորելով առվի սրընթաց հոսանքը:

Եթե ուզում եք տեսնել իսկապես բարեպաշտ մի մարդու, որ իր գործն է կատարում, գնացեք Ֆրեզնո և դիտեք նրա ծառերը, որթատունկերն ու բանջարանոցը ջրող հյուրընկալ այգեպանին:

Կային նաև Ֆրեզնոյից ավելի լավ քաղաքներ, ուր կարելի էր ապրել, բայց Ֆրեզնոյում լավ ջուր կար, կար հայրենիքի ջուրը, և գնացին՝ այնտեղ բնակվելու: Եվ բոլորը չէ, որ այգեպան էին:

Ես հիշում եմ դերասան Ոստիկանյանին, որին հանդիպել եմ Քինգս գետի ափին խնջույքի ժամանակ՝ 1918-ի ամռան մի կիրակի օր: Նա գրեթե ութսուն տարեկան էր: Մեկ ամիս առաջ նրան տեսել էի մի ներկայացման մեջ, որից բան չէի հասկացել հայերեն չիմանալուս պատճառով, բայց խորապես ըմբռնեցի հայի հոգին. Ոստիկանյանը փառավոր էր այդ երեկո: Ուրախություն էր լսել նրա հայերենը. լիներ բեմից, լիներ հենց խնջույքում: Նա հայերի համար խաղացել էր աշխարհի զանազան քաղաքների բեմերում՝ չհաշված Փարիզը, Հռոմը, Բեռլինը, Լոնդոնը, Կալկաթան, Բոմբեյը, Կահիրեն, Կոստանդնուպոլիսը, Բեյրութը, Բուենոս Այրեսը, Ռիոն և շատ ուրիշ քաղաքներ: Լավ խոսում էր անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն:

Հիշում եմ նրան՝ գետափին խոտի վրա նստած հսկա մի չինարի տակ բարեկամների հետ զրուցելիս: Նրանցից մեկը նկարների և արվեստի հազվագյուտ առարկաների առևտրական էր. եկել էր Նյու Յորքից և Չինաստան ու Հնդկաստան էր գնում գործով: Այս մարդն ուզեց իմանալ, թե ինչու Ոստիկանյանն աշխարհի բոլոր տեղերից ընտրել էր Ֆրեզնոն՝ կյանքի վերջին տարիներն այնտեղ անցկացնելու: Ոստիկանյանը նայեց նրան ու ժպտաց:

– Մի որսորդ,– ասաց նա,– այնքան գեղեցիկ մի թռչուն բռնեց թակարդով, որ ասաց ինքն իրեն. «Մեղք կլիներ վերջ տալ այս արարածի կյանքին: Կտանեմ տուն, մի սքանչելի վանդակ կշինեմ նրա համար, ուտելիք ու ջուր կտամ և ամբողջ հոգով կսիրեմ նրան, որովհետև ուրիշ այսպիսի թռչուն չեմ տեսել»:

Որսորդը թակարդից ազատեց թռչունին, շոյեց նրա փետուրները, քնքուշ ու սիրալիր խոսքեր ասաց նրան և տարավ տուն: Մի գեղեցիկ վանդակ շինեց թռչունի համար, դրեց նրան վանդակի մեջ, կուտ, ջուր դրեց նրա առաջ: Մի տարի պահեց թռչունին, բայց երեկոյան, երբ տուն էր գալիս ու մոտենում վանդակին, լսում էր, որ թռչունը հառաչում է ու ասում. «Ա՜խ, հայրենի՛ք»:

Վերջապես որսորդն ասաց:

– Թռչո՛ւն, ասա՛ ինձ՝ որտեղ է այդ քո երկիրը, որի կարոտն ես քաշում այսպիսի վշտով:

– Ցույց տա՛մ քեզ,– ասաց թռչունը:

Որսորդը բացեց վանդակի դռնակը, և թռչունը դուրս թռավ: Թռչում էր թռչունը, որսորդն էլ գնում էր նրա հետևից: Մի ամբողջ ամիս գիշեր ու ցերեկ թռչունը թռչում էր, որսորդն էլ գնում հետևից: Հաղթահարելով բոլոր խոչընդոտներն ու գիրկընդխառն լեռները՝ ի վերջո թռչունը հասավ մի այնպիսի ամայի, տոթ, չոր, ժայռոտ ու ամուլ տեղ, որ կարծես աշխարհի ծայրն էր:

Թռչունը վերջապես թառեց մի փոքր ու չոր ծառի վրա, որ ծածկված էր փշերով ու փոքր, փխրուն տերևներով: Եվ թռչունն ասաց որսորդին.

– Այս է իմ երկիրը:

Ոստիկանյանը ժպտաց Նյու Յորքից եկած մարդուն և ասաց.

– Ա՛յ մարդ, սա մի՞թե Հայաստանը չէ, ի սեր Աստծո: Այս ջո՛ւրը, այս հո՛ղը, այս որթատունկե՛ր...

Բառային աշխատանք

1. Բնագրում գտի՛ր և արտագրի՛ր ը-ի ուղղագրությանը վերաբերող բոլոր բառերը:

2. *Որթապունկ*, *զբոսախնջույք*, *սափոր*, *ածու–ածու*, *բարեպաշտ*, *այ–գեպան*, *Ֆրեզնո*, *որսորդ*, *թռչուն* բառերով նոր պատմությո՛ւն հյուսիր:

3. Լրացրո՛ւ ը տառը այն բառերում, որոնցում անհրաժեշտ է՝ *հյուր_նկալ*, ***անակ_նկալ***, *դյուր_նկալ*, *առ_նչվել*, *երկ_նչել*, *խոչ_նդոտել*, ***ակ_նթարթ***, *դաս_նթաց*, *մ_թնկա*, *ան_նթեռնելի*, *խոյ_նթաց*, ***չ_մբռնել***, *նախ_նտրել*, *սր_նթաց*, ***խաղ_նկեր***, *_մպե–լիք*, *առ_նթեր*, *ակ_նդեպ*, *դյուր_նթեռնելի*, *չ_նկնել*, *ան_մբռնե–լի*, *դր_մբոց*, *օր_նդմեջ*, *այլ_նտրանք*, *ձեպ_նթաց*, *ան_նդունակ*, ***ակ_նբախ***, *_նթանալ*, *զուգ_նթաց*, *համ_նկնել*, *չ_նդդիմանալ*, *երկ_նտրանք*, *կոր_նթարդ*:

4. Վերը բերված բառերից ընդգծվածները ենթարկի՛ր բառակազ–մական վերլուծության և դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:

5. Դո՛ւրս գրիր տեքստում հիշատակված քաղաքների ու երկրների անունները: Նշված վայրերը ցո՛ւյց տուր քարտեզի վրա:

6. Տրված բառերում ավելացրո՛ւ բաց թողնված ը տառը որտեղ անհրաժեշտ է և տեղադրի՛ր տրված տեքստի համապատաս–խան նախադասություններում:

Դաս_նկեր, *ամենա_նտիր*, *խոյ_նթաց*, *ան_նդհատ*, *հյուր_նկալ*, *ան_մբռնելի*, *որոտ_նդոստ*, *մերթ_նդմերթ*:

_____ տանտերը, որ իմ երբեմնի _____ էր, մեզ հյուրասիրեց _____ խորտիկներով, ապա առաջնորդեց մո–տակա բարձունքը, որտեղից բացվում էր մի հրաշալի բնանկար: Լսվում էր գետակի _____ խոխոջյունը, օդում երևում էին _____ արծիվները: _____ զգացումով էր համակվել էությունս: Տերևների _____ սոսափը, _____ լսվող անտառային ձայները հիացրել էին մեզ:

Տեքստային աշխատանք

1. Ի՞նչ է հայրենիքը սփյուռքահայի համար: Իսկ քեզ համա՞ր:
2. Պարզաբանի՛ր՝ ինչով է տվյալ ստեղծագործությունը քեզ համար հետաքրքիր:
3. Ներկայացրո՛ւ քո կարծիքը տեքստի վերնագրի և բովանդակության փոխադարձ կապի մասին:
4. Դասանյութում առանձնացրո՛ւ հերոսներին բնութագրող դեպքերը, բնության պատկերները նկարագրող բառերն ու արտահայտությունները:
5. Արտահայտի՛ր սեփական տեսակետ նյութի բովանդակության շուրջ:
6. Մեկնաբանի՛ր պատմվածքի հերոսների արարքների դրդապատճառները:
7. Պատմվածքի բովանդակությունը վերարտադրելիս ստեղծագործաբա՛ր օգտագործիր հեղինակային բառապաշարը և գեղարվեստական միջոցները:
8. Ստեղծի՛ր ստեղծագործության մեկ այլ ավարտով գրավոր տարբերակ (խմբային աշխատանք):
9. Մատնացո՛ւյց արա, թե ինչն ես հավանել ստեղծագործության մեջ՝ պատմությունը, գործող անձանց վարքը, բնության նկարագրությունը, երկխոսությունները և այլն:
10. Նկատի՛ր՝ ինչու են հայ հեղինակներն իրենց ստեղծագործություններում հաճախ ներկայացնում ծիրանի ծառը, ձիթենին, նռնենին, խաղողի որթը: Ո՞ր է դրա խորհուրդը: